ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

1(9)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 1(9)

ԵՐԵՎԱՆ 2022

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*
Հարություն Մարության, *պ. գ. դ.*
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*
Հռիփսիմե Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*
Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*
Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*
Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*
Համո Սուքիասյան, *պ. գ. թ., դոցենտ*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*)
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*)
Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ Բրիտանիա*)

ISSN 1829-0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արփակ Ասապրյան

ԿԱՐԻՆՈՒՄ 1785 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ №3579 ՄԻՆԻՆ 8

Լիլիա Ավանեսյան

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՔՆԱԴԱՐՅԱՆ ԱՆԿՎԱԾԻ ԵՎ ԳՈՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԸՍՏ ՀՊԹ ՆՅՈՒԹԵՐԻ) 21

Հրազդան Թոքմաջյան

ՄԱԼԱԹԻԱՅԻ ՀՅՈՒՍՎԱԾ ԿԱՐ 38

Հասմիկ Պետրոսյան

ԳՈՒԳԱՐՔԻ ՏՆԱՅՆԱԳՈՐԾ ԲՈՒՍԱՆԱԽՇ ԳՈՐԳԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԸՍՏ ՀՊԹ, ՀԱԹ, ԼՓԵԹ, ԵՔՊԹ ՆՅՈՒԹԵՐԻ) 46

ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Ասպղիկ Իսրայելյան

ԱՉՔԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ ԵՎ ՈՉ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ 56

Արևիկ Մելիքյան

ՊԱՏՈՒՄՆԵՐ 1918 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ 82

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նելլի Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԲԱՑԻԿ-ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ 94

Արմինե Շահբազյան

«ԴԱՎԻԹ ԲԵԿ» ԿԵՐՊԱՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՅՆԱՑՈՒՄԸ 103

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայկ Նազարյան

1826 – 1828 ԹԹ. ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՄՆԱԿՑԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԶՈՐԱՅԻՆ ԴՐՈՒԺԻՆԱՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱԿԱԶՄԸ, ԹՎԱԿԱԶՄԸ, ՀԱՄԱԶԳԵՍՏԸ, ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՇՆԵՐԸ 114

Վանիկ Վիրաբյան

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ 1919 Թ. ԶՈՂ-ԲԱՍԱՐԳԵՉԱՐՅԱՆ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԳՆԴԱՊԵՏ ՔԼԱՅՎ ԹԵՄՊԵՐԼԻԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 124

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

Լիլիա Ավանեսյան

ՆԱԶԻԿ ԱՎԱԳՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ 149

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 153

Արևիկ Մելիքյան

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր,
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան

arevikmeliqyan@gmail.com

ՊԱՏՈՒՄՆԵՐ 1918 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

Հիմնաբառեր. Պատում, հուշագրություն, թանգարան, հերոսամարտ, զորահրամանատար, աքսոր, զինվորական կոչում:

Հայ ժողովրդի պատմությունը հայտնի է իր հերոս անհատներով, որոնք իրենց հայրենանվեր գործունեությամբ մնացել են հայոց պատմության էջերում: Այդ հերոսների ցանկը լրացրել են 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի մասնակիցները: Նրանց մասին տպագրվել են հոդվածներ, հեռարձակվել հաղորդումներ, իսկ Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանում գործող ցուցադրությունում նրանք ներկայացված են պատշաճ կերպով:

Զորահրամանատարների մարտակոչերը տարբեր առիթներով հնչում և անսահման հայրենասիրություն ու հավատ են սերմանում յուրաքանչյուր հայի մեջ: Մասնակիցների անվան հետ կապված կան բազմաթիվ պատումներ՝ զրույցներ, գրավոր կամ բանավոր պատմություններ, որոնց էլ ցանկանում ենք անդրադառնալ սույն հոդվածով: Հոդվածում ներկայացված են 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի մասնակիցներ Թովմաս Նազարբեկյանի, Մովսես Սիլիկյանի, Դանիել Բեկ-Փիրումյանի, Մարտիրոս Աբրահամյանի, Հովհաննես Բաղրամյանի, Նավասարդ Վեզիրյանի մասին պատումներ, որոնց համար աղբյուր են հանդիսացել գրավոր և բանավոր հուշերը:

Մայիսյան հերոսամարտերի ակնառու դեմքերից մեկը Առանձին հայկական բանակային կորպուսի գլխավոր հրամանատար Թ. Նազարբեկյանն է, ում մասին շատ է գրվել որպես պատմական նշանավոր դեմքի: Նա հայրենասեր, խիզախ զորահրամանատար էր, մասնակցել է ճակատամարտերի և իր զորավարական տաղանդի ու փորձի շնորհիվ տարել բազում հաղթանակներ: Նա ունի հարուստ կենսագրություն: Թ. Նազարբեկյանը ծնվել է Թիֆլիսում, ռազմական կրթությունն ստացել Մոսկվայում և զինվորական ծառայության անցել ռուսական բանակում: Զբաղեցրել է 4-րդ Անդիջանյան պահեստային գումարտակի, Կիրսանովյան 286-րդ հետևակային գնդի հրամանատարի պաշտոնները, ավելի ուշ՝ 1917 թ. վերջին,

* Ստացվել է 27.04.2022 թ., ուղարկվել է գրախոսման 04.05.2022 թ., ընդունվել է տպագրության 05.08.2022 թ.:

նշանակվել է նոր կազմավորված Առանձին հայկական բանակային կորպուսի հրամանատար (Բանբեր Հայաստանի արխիվների 1992, 111–117)։

Պահպանվել է Արսեն Ավագ քահանա Սիմոնյանցի հուշերը, ըստ որի Թ. Նազարբեկյանը Մոսկվայում եղած ժամանակ՝ աքսորից հետո, մեկ շաբաթ մնացել է Արսեն քահանայի տանը։ Անկեղծ զրույցները շատ հետաքրքիր էին և քահանան հետագայում գրել է, որ ցավոք դրանք բառացիորեն գրի չի առել և ստիպված է 30 տարի հետո հիշողությամբ թղթին հանձնել։ Ա. Սիմոնյանցը գրել է, որ Թ. Նազարբեկյանը շնորհիվ իր պարզ, սրտաբաց վերաբերմունքի շատ սիրված է եղել ռուս զինվորների կողմից, բացի այդ նա ուներ մարդկային խիղճ, արագ մտերմացել և ջերմ հարաբերություններ է ստեղծել իրեն ենթակաների և հրամանատարների հետ։ Հետևողական էր, նվիրված և հոգատար զինվորների հանդեպ։ Հատուկ ուշադրություն է դարձրել զինվորին տրվող սննդի որակին, ամեն օր մտել է խոհանոց, համտեսել՝ հետո նոր միայն թույլ տվել սնունդը բաժանել նրանց (Սիմոնեանց 1954, 25)։

Բանավոր ավանդույթով հայտնի է նաև հետևյալ զրույցը. Ջորավար Անդրանիկ Օզանյանը մի անգամ ստուգել է զինվորների ճաշը և շատ դժգոհ է մնացել ճաշի որակից։ Պարզելով, որ այն պատրաստվել է գեներալ Նազարբեկովի կարգադրությամբ, կրակում է դեպքի վայրը եկող գեներալի վրա, վերջինս հազիվ, պատահականորեն է միայն ազատվում։ Անդրանիկը սիրված է եղել ժողովրդի կողմից և չի բացառվում, որ նման զրույցները հյուսվել են Անդրանիկի անձը գերագնահատելու, կարևորելու համար։ Կարելի է ենթադրել, որ այս զրույցի հիմք է դարձել հավանաբար Անդրանիկի և Թ. Նազարբեկյանի մեջ գոյություն ունեցող հակասությունները։ Հայոց ազգային խորհրդի համաձայնությամբ Առանձին հայկական բանակային կորպուսի հրամանատար է նշանակվել գեներալ Թովմաս Նազարբեկյանը, այնինչ Անդրանիկը իրեն էր տեսնում կորպուսի հրամանատարի պաշտոնում։ Դրանից հետո ավելի է սրվել Անդրանիկի հարաբերությունները Հայ հեղափոխական դաշնակցության (ՀՅԴ) և Թ. Նազարբեկյանի հետ։ Անդրանիկը հաճախ է իր ելույթներում ծաղրել նրան՝ շեշտելով, որ նա համարվում է հայոց սպարապետ, բայց չի տիրապետում մայրենիին։ Անդրանիկը նաև հեգնել է Թ. Նազարբեկյանի ունակությունները (Անկախ նորություն 2015, 1)։ Պահպանվել են Թ. Նազարբեկյանի և Անդրանիկի միմյանց տված բնութագրումները. Թ. Նազարբեկյան՝ «Անդրանիկը՝ կարգադրող, անհավասարակշիռ, բռնակալ բնավորության տեր, որն իր ռազմական գիտելիքներով իրեն բարձր է դասում բոլորից և անկարող է ենթարկվել ուրիշներին», Ա. Օզանյան՝ «Նազարբեկյանը՝ ինքնավստահ, հպարտ ու տիրական մարդ է» (Անկախ 2011)։ Թ. Նազարբեկյանը ոչ միայն մեծ հայրենասեր էր, այլև արհեստավարժ զինվորական, նա հաղթել է բազում ճակատամարտերում։

20-րդ դարասկզբին Ցարական կառավարության կողմից հայ ժողովուրդը ենթարկվել է բազում հալածանքների։ Այդ թվում կառավարության գաղտնի հրամանով արգելվել է զինվորական շտաբների հայ սպաներին գնդապետից ավելի բարձր զինվորական կոչում շնորհել։ Այդ ցուցակում է եղել նաև Թ. Նազարբեկյանը։ Նա մասնակցել է 1904–1905 թվականների Ռուս-ճապոնական պատերազմին

և հատկապես իր խիզախությամբ աչքի ընկել Մուկդենի ճակատամարտում, ինչի համար պարգևատրվել է ոսկե սրով (ՀԱԱ, ֆ.121, ց.2, գ.126, թ.2–5): Զինադադարի կնքումից հետո այցելել է հրամանատարական կետ, որտեղ ջերմ ընդունելության է արժանացել, բայց ցավոք նրան հայտնել են այդ գաղտնի հրամանի մասին: Չհանդուրժելով նման անարդարությունը՝ Թ.Նազարբեկյանը ներկայացել է Գերագույն հրամանատարությանը և ասել. «...Հավատքով ու ճշմարտությամբ ծառայել եմ հայրենիքին, պատերազմներում ու խաղաղ ժամանակներում չեմ արատավորել սպայի պատիվը, չեմ խախտել զինվորականի երդումը... Ինձ համարել եմ ռուսական բանակի ու կայսրության հավատարիմ սպա: Միայն հիմա, իմ ժողովրդի նկատմամբ կատարվող ապօրինություններից հասկացա, գիտակցեցի, որ ամենից առաջ հայ եմ: Ի նշան բողոքի թողնում եմ ծառայությունս» (Հայ զինվոր 1995, 9–16): Ներկայացրել է հրաժարականի դիմում, որը չեն ընդունել, բայց նա անդրդվելի էր: Ամիսներ անց զորացրվել է իր դիմումի համաձայն: Նա չի զղջում նույնիսկ այն դեպքում, երբ ռուսական հրամանատարությունը, այնուամենայնիվ, նրան գերենալ-մայորի կոչում է շնորհում (ՀԱԱ, ֆ 121, ց 2, գ 126, թ 2–5): Ցարական կառավարության համար հեշտ չէր կորցնել լավագույն ռազմական գործչին: Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուն պես նա վերադարձել է ծառայության և ստանձնել պատասխանատու պաշտոն:

1915թ. ապրիլին տեղի ունեցած Դիլմանի ճակատամարտը, Թ.Նազարբեկյանի նշանավոր հաղթական ճակատամարտերից է: Ճակատամարտում հայազգի գեներալ Թովմաս Նազարբեկյանի հրամանատարությամբ գործող ռուսական զորքերը և Անդրանիկ Օզանյանի հրամանատարությամբ գործող Հայկական 1-ին կամավորական գնդի (դրուժինա) մարտիկները իրենց սխրագործությունների շնորհիվ պարտության մատնեցին Խալիլ բեյի հրամանատարությամբ գործող թուրքական 3-րդ հավաքական դիվիզիային: Ճակատամարտին մասնակցած, կամավորական Միսակ Նուպարյանը իր հուշերում նկարագրել է ռազմական գործողություններն ու անդրադարձել Թ.Նազարբեկյանին. «Ան կարգի բերաւ զինուորները և հրամայեց գրաւել Մուղանճուքի ետևի լեռները և նոյն գիշերը խրամատներ փորել: Զօր.Նազարբէկեան պատերազմի յատակագիծը ունէր և ըստ այնմ զինուորները կը դասաւորէր» (Նուպարեան 1947, 24):

Ըստ Արսեն Ա.քահանա Սիմոնյանցի հուշերի՝ ճակատագրական այդ մարտում Թ.Նազարբեկյանն այնքան վստահ է եղել իր մշակած պլանի, զորքերի դասավորության վրա, որ նույնիսկ գնացել է ձուկ որսալու (Սիմոնեանց 1954, 26): Իրականություն է դա թե ոչ, չեմ կարող ասել: Դիլմանի ճակատամարտում թուրքական զորքերի հրամանատար Խալիլ բեյն ուներ մեծաթիվ զորք և չի կարծել, թե կպարտվի: Սակայն թուրքական զորքը պարտվեց, իսկ Խալիլը, լսելով պարտության լուրը և խուճապի մատնվելով, առանց կոշիկների, գուլպաներով արագ փախել է: Տարիներ անց, երբ Երևանում, տեղի է ունեցել Թ.Նազարբեկյանի և Խալիլ փաշայի պատմական հանդիպումը, Խալիլն այսպես է ասել. «Կանոնը սա է. աշակերտը պետք է ուսուցչի մոտ առաջինը գնա և ոչ թե ուսուցիչը՝ աշակերտի մոտ: Դուք իմ ուսուցիչն եք, որովհետև Դիլմանի մոտ ինձ հաղթեցիք: Բայց կարևոր չէ, որ ես ջահել էի, դուք՝ ծեր, ուստի հետևիցս հասնել չկարողացաք ու ինձ ողջ-ողջ

գերի բռնել չհաջողեցիք, որովհետև ես արագությամբ փախա» (Սիմոնեանց 1954, 27)։ Ի պատասխան զորավար Թ.Նազարբեկյանն ասել է. «Ոչ, Խալիլ փաշա, ես կհասնեի ձեր հետևից, եթե լսեի Անդրանիկին և ոչ թե ռուս խորհրդատուներիս և եթե հետապնդեի ձեզ Անդրանիկի ցույց տված ճանապարհով» (Սիմոնեանց 1954, 27)։

Հատկանշական փաստ է, որ Ֆրանսիական կառավարությունն իր պետական ամենաբարձր շքանշաններից երկու հատ ուղարկել էր Ռուսաց Նիկոլայ 2-րդ կայսրին՝ պատերազմում աչքի ընկած հրամանատարներին պարգևատրելու համար։ Բարձր գնահատելով Թ.Նազարբեկյանի ավանդը Առաջին համաշխարհային պատերազմում, կայսրը դրանցից մեկով պարգևատրել է Թ.Նազարբեկյանին, ում արտոնվել է 3 ամիս անվճար ճանապարհորդել Ֆրանսիայում և ապրել լավագույն պանդոկներից մեկում՝ անվճար (Սիմոնեանց 1954, 28)։

Թ.Նազարբեկյանի անձի հետ կապված կա միակողմանի և ծայրահեղացված ևս մի պատում։ Հ.Թուրշյանը անդրադառնալով 1918 թ. մայիսյան օրերին, հատկապես Ալեքսանդրապոլի անկմանը, հիշատակել է գյումրեցիների սրախոսություններն՝ ուղղված Թ.Նազարբեկյանի անձին. «Գեներալ Նազարբեկով չեղավ, գեներալ նազադ բեգում եղավ. Կարսը ոսկով ծախեց թուրքին, էդ քիչ էր, հիմա էլ Գյումրին ծախեց» (Թուրշյան 1965, 113)։ Մայիսյան հերոսամարտերը խորհրդային տարիներին ներկայացվել են զուտ գաղափարախոսական-քաղաքական նկրտումներով, իսկ Հ.Թուրշյանը կասկածի տակ է դրել Թ.Նազարբեկյանի հրամանատարական տաղանդն և ընդհանրապես նսեմացրել է այդ արհեստավարժ զինվորականին։ Իրականում Կարսի հանձնումը եղել է Անդրկովկասյան դեմոկրատական դաշնային Հանրապետության կառավարության ղեկավար Ակակի Չխենկելու հրամանով։ 2008 թ. կինոռեժիսոր Տիգրան Խզմալյանն իր «Սարդարապատի հերոսամարտ. մայիսի 28 1918 թ.» ֆիլմում նույնությամբ օգտագործել է Թ.Նազարբեկյանին տրվող բնութագրումը, որն ըստ իս սխալ է, և չի կարելի սևացնել այդ մեծ հրամանատարին։

Անդրադառնանք հաջորդ հերոսին՝ Մ.Սիլիկյանին։

Գեներալ-մայոր Մ.Սիլիկյանը Երևանյան զորաջոկատի հրամանատարն էր և ղեկավարել է ռազմական գործողությունները Սարդարապատի և Բաշ-Ապարանի ռազմաճակատներում (1918 թ. մայիսի 22–29)։ Մ.Սիլիկյանի անունն ու ազգանվեր գործունեությունը հայտնի է ողջ հայությանը։ Հ.Բաղրամյանը բարձր էր գնահատել նրան՝ համարելով այդ ժամանակի սպաներից ամենատաղանդավորը։

Մ.Սիլիկյանը սոսկ զինվորական չէր, լավ երգել է, ղեկավարել է գնդի երգչախումբը և սիրել է լուսանկարել։ Սանկտ-Պետերբուրգում սովորելու տարիներին հաճախել է մշակույթի օջախներ։ Հերթական թատրոն այցելության ժամանակ փորձել է պարտերի առջևի շարքերի տոմս ձեռք բերել, բայց չի հաջողվել։ Ըստ սպայական պատվի կոդեքսի՝ թատրոնում սպան իրավունք չուներ տեղ զբաղեցնել պարտերի յոթերորդ շարքից վերև։ Երբ պատրաստվել է հեռանալ, նրան է մոտեցել է մի օրիորդ (ով այդ երեկո երգել է բեմում) և առաջարկել է պարտերի չորրորդ շարքի տոմս։ Համերգից հետո երիտասարդ զինվորականը ապարդյուն փորձել է գտնել նրան։ Տարիներ անց, երբ Մ.Սիլիկյանը ծառայում էր Կարսում

(1901թ.), հյուրախաղերով քաղաք են ժամանել պետերբուրգցի արտիստներ: Նրանց մեջ էր տոմս նվիրող երգչուհին՝ ռուսական բանակի ազգությամբ լեհ կադրային սպա Ալեքսանդր Զդանովսկու դուստրը՝ Նատալյա Զդանովսկայան: Համերգից հետո գնդի սպաները հյուրասիրություն են կազմակերպել: Գինովցած դաշնակահարին փոխարինել է Մ.Սիլիկյանը, ներքին մի անբացատրելի մղումով հիանալի նվագակցել է և երգել աղջկա հետ: Երգից հետո էլ, ասես, վաղուց կայացրած որոշումն է հայտնել՝ ամուսնության առաջարկ է արել: Թատերախումբը Կարսից մեկնել է առանց Նատալյայի (2002, 7–14):

Արժե հիշատակել ևս մեկ պատում՝ կապված Առաջին համաշխարհային պատերազմի տարիների հետ:

1915թ. դեկտեմբերին Մ.Սիլիկյանը մասնակցում է Էրզրումի (Կարին) գրավման նշանավոր ռազմագործողությանը: Էրզրումի գրավման օրը՝ 1916թ. փետրվարի 2-ի լույս 3-ի գիշերը, նրա ղեկավարած 6-րդ գունդը մտնում է քաղաք, իսկ Մ.Սիլիկյանը նշանակվում՝ Էրզրումի զինվորական պարետ: Քաղաք մտնելուց անմիջապես հետո գնդի անձնակազմը ձեռնամուխ է եղել դասալիքների և կողոպտիչների հայտնաբերմանն ու ձերբակալմանը: Կովկասյան 1-ին բանակային կորպուսի հրամանատարը հրաման է տվել Մ.Սիլիկյանին, որ արգելի հայերի մուտքը Էրզրում: Գեներալի հրամանը բացատրվում է հայերի նկատմամբ ունեցած անբարյացակամ վերաբերմունքով, ինչպես նաև այն հանգամանքով, որ կորպուսի հրամանատարին հետաքրքրել է Էրզրումի սբ.Աստվածածին եկեղեցու գույքը, որ կողոպտել էին երիտթուրքերը, բայց չէին հասցրել դուրս բերել քաղաքից: Առաջինն այդ մասին տեղեկացել է գնդապետ Սիլիկյանը, որը շտապել է հեռագրել Թիֆլիսի քաղաքագլուխ Ալեքսանդր Խատիսյանին, խնդրելով ուղարկել մի վստահելի անձ, որը կտնօրինի հայերին պատկանող գույքը: Հավանաբար այդ հեռագիրն է եղել պատճառը, որ Մ.Սիլիկյանը և նրա գունդը կարճ ժամանակ անց ուղարկվել են ռազմաճակատ:

Մ.Սիլիկյանին հիշում են նաև այսօր և նրա մասին պատմում շատ հետաքրքիր պատումներ: Մեծ զորահրամանատարի 150-ամյակի առթիվ հանդիպեցի Ամերկոմի (Ամերիկյան Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտե, ստեղծվել է 1918թ.) դպրոցների վերատեսուչ Վարազդատ Տերոյանի աղջկա՝ Նունե Դերոյանի (աղջկա ազգանունը Դերոյան է) հետ, ով մոտիկից ճանաչել է Մ.Սիլիկյանին: Նրանք եղել են հարևաններ: Երևանի Սվերդլովի (այժմ՝ Բյուզանդ) փողոցում են ապրել Տերոյանները և Սիլիկյանները (Սվերդլովի 99): Նրանք հաճախ են այցելել միմյանց, սեղանի շուրջ զրուցել, շախմատ խաղացել: Տիկին Նունեն այսօր էլ զարմանքով ու հիացմունքով պատմում էր իրեն հուզող մի դեպք. «Մի անգամ, Նոր տարուն, Մ.Սիլիկովը եկավ մեր տուն Ձմեռ պապի մորուքով ու գլխարկով: Ես այդ ժամանակ մոտ 8–9-ը տարեկան աղջիկ էի: Ինձ համար նա Ձմեռ պապի խաղաց, նույնիսկ՝ փոքրիկ նվեր տվեց»: Նունե Դերոյանը խնամքով պահել ու փայփայել էր այդ նվերները, որոնցից մեկը՝ ցուցափայտը, նվիրեց Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանին:

Ն. Դերոյանը Մ. Սիլիկյանի մասին խոսել է շատ գորովանքով, պատմել, որ Մ. Սիլիկյանը չի տիրապետել հայերենին, բայց ոգին հայկական է. «Մինչ հիմա մտածում եմ, թե ինչ լեզվով էին խոսում հայրս՝ Վարազդատ Տերոյանը և Մովսես Սիլիկյանը: Հայրս ռուսերեն չգիտեր, Սիլիկյանը՝ հայերեն» (Մուրադյան 2012, 7):

Մեկ այլ նշանավոր հերոս Դանիել Բեկ-Փիրումյանը եղել է Սարդարապատի ռազմաճակատի հրամանատարը: Ծնունդով արցախցի այս հերոսը նախաձեռնող, ողջամիտ, էներգիայով լի մարտիկ էր: Նա իր խիզախությամբ, քաջությամբ աչքի է ընկել Սարիղամիշի, Էրզրումի համար մղված մարտերում: Բացառիկ է եղել Դ. Բեկ-Փիրումյանի դերակատարումը Սարդարապատի ճակատամարտի հաղթանակում: Նրա անմիջական ջանքերով հնարավոր է եղել կազմակերպել Սարդարապատի ռազմաճակատի գիծը և արժանի հակահարված տալ թուրքական զորքերին: Սարդարապատի ճակատամարտի մասնակից Ալեքսանդր Շնեուրի հուշերում կա մի շատ հետաքրքիր պատում նվիրված Դ. Բեկ-Փիրումյանի քաջությանը: Նրա հերոսական ոգին իրեն դրսևորել է ինչպես հրամանատարի, այնպես էլ շարքային զինվորի վարքում: Սարդարապատի ճակատամարտի վճռական պահին նա իր զինվորներին ոգևորելու նպատակով վերարկուի կարմիր աստառը դեպի դուրս հագած, հրամանատարությունը հանձնելով շտաբի պետին, նետվել է կռվի դաշտ՝ ցուցադրելով զինվորական հմտություն և արիություն: Գարեգին Հովսեփյանը նրա մասին գրել է. «...1918 թվին նորան ծանոթացել էինք Իգդիրի ճակատում, բայց մտերմացել Սարդարապատում: Նորա հոչակը բարձրացել էր հատկապես այդտեղ տարած հաղթությամբ: Ժպիտով նա մեզ «Ղևոնդ երեց» էր անվանում, իսկ մենք նորան՝ «Վարդան սպարապետ» (Նորք ամսագիր 1990, 41):

Անդրադառնանք Սարդարապատի ճակատամարտի հատուկ հեծյալ գնդի էսկադրոնի հրամանատար, հետագայում ԽՍՀՄ մարշալ Հ. Բաղրամյանին: Սարդարապատի ճակատամարտի ժամանակ նրան հանձնարարված էր պարզել իրադրությունը՝ ինչ ուժեր են հարձակվում Սարդարապատի ուղղությամբ: Հ. Բաղրամյանի պարեկազորը Սարդարապատ գյուղի գլխավոր փողոցում հանդիպել է թուրքական մի ամբողջ հետևակի՝ զինված հրացաններով և ռուսական բանակի համազգեստով: Նա խորապես համոզված է եղել, որ նրանք յուրայիններ են, իջել է ձիուց և հայի պես խաչակնքվել է: Այդ տեսնելով թուրքերը, համազարկ են տվել: Բայց քանի որ համազարկը նշանակետ չի ունեցել, զարկը Հ. Բաղրամյանին չի կպել: Նա հասցրել է միայն բացականչել՝ «Հետ դա՛րձ», և ինքն էլ նետվել է մոտերքում գտնվող նրբանցք՝ խուսափելով համազարկերից: Նա շրջանցելով այդ փողոցները հասել է Գեչոլու՝ յուրայինների մոտ: Հ. Բաղրամյանը գրել է. «Իսկ այստեղ իմ զինվորներն արդեն զեկուցել էին, թե զոհվել եմ, սակայն հայտնվեցի՝ ողջառողջ: Իմ ենթականերն ուրախ էին: Գնդի հրամանատարն, ուսիս խփելով, ասաց. «Դե՛, անցած լինի, պատահում է...» (Armenia.IM 2018):

Մայիսյան հերոսամարտերից հետո Հ. Բաղրամյանը ծառայության է անցել Ալեքսանդրապոլում՝ հայկական առաջին հեծյալ գնդում, որը ճակատագրական է եղել նրա համար՝ գտել է ապագա կնոջը՝ Թամարային: Հետաքրքիր է եղել նրանց սիրո պատմությունը, որին անդրադարձել է թոռնուհին՝ Կարինա Նաջարովան: Թամարան Նախիջևանի Ագուլիս գյուղից էր և սովորել է Ալեքսանդրապոլի իգա-

կան գիմնազիայում: Նրանք մտերմացել են, փոխադարձաբար համակրել իրար, հաճախ հանդիպել, խորհել ապագայի մասին: Տարեվերջին Թամարան մեկնել է ծնողների մոտ և հանգամանքների բերումով այլևս չի վերադարձել Ալեքսանդրապոլ: Մեկ տարի անց ամուսնացել է: Թվում է, թե ամեն ինչ վերջ, բայց Ճակատագրով նախատեսված էր նրանց միությունը: Թամարայի ամուսնությունը երկար չի տևել, ամուսինը զոհվել է պատերազմում, այդ մասին իմանալով Բաղրամյանը շտապել է գյուղ՝ իր սիրելիի մոտ: Թամարան գտնվել է հղիության 9-րդ ամսում: Չնայած այդ հանգամանքին, նրանք ամուսնացել են: Շուտով ծնվել է տղա, ում Մովսես են կոչել: Բաղրամյանը նրան սիրել է հարազատ զավակի նման: 1923թ. ծնվել է Թամարայի և Հովհաննեսի դուստրը՝ Մարգարիտան՝ Կարինա Նաջարովայի մայրը: Նրանք ապրել են երջանիկ իրար հետ կիսելով կյանքի բոլոր դժվարությունները: Նա եղել է լավ ամուսին և լավ հայր: Թոռնուհին պատմել է. «Երբեք չեմ մոռանա, թե ինչպես էր աշխատանքի գնալիս պապս իր կնոջը սիրային երկտող թողել: Մինչ օրս պահպանվել են Քաղաքացիական և Հայրենական պատերազմի ժամանակ գրած նրա նամակները: Առանց արցունքների դրանք հնարավոր չէ կարդալ»: Ահա մի հատված նամակից. «Թամարա սեր իմ, դու իմ կյանքի լույս: Կյանքիս ամենից թանկ և սիրելի էակը միշտ եղել ես, կաս և կլինես միայն դու: Չեմ կարող բառերով նկարագրել, թե որքան եմ քեզ սիրում: Սակայն որոշ հանգամանքների բերումով... որոնք հաճախ ինձ համար էլ են անհասկանալի, երբեմն անտարբերություն եմ ցուցաբերում քո հանդեպ: Բայց հավատա, որ ես քեզ շատ եմ սիրում: Դու ընտանիք սիրող ցանկացած մարդու կնոջ իդեալ ես:

Քո Վանյա, 25 մայիս 1943թ.»:

Դժվար է պատկերացնել, որ այդ խիստ մարդն ընդունակ էր նման նուրբ զգացմունքների» (Բաղրամյան վով. Իվան Բաղրամյան. «Փաստեր»): Նա ապրել է Մոսկվայում, բայց կապված էր իր Հայրենիքի հետ և հաճախ էր հյուր գալիս: 1968թ. Հ. Բաղրամյանը եկել է Հայաստան: Երևանի պետական համալսարանի դահլիճում հանդիպել է բուհի ուսանողների և դասախոսական կազմի հետ, որի ընթացքում մարշալը պատմել է Անդրանիկի հետ իր հանդիպման մասին: 1918թ. Խորասան գյուղում Անդրանիկին ներկայանալուց հետո նրա դասակը անցել է կարճատև հանգստի: Հաջորդ օրը վաղ առավոտյան տեղի է ունեցել անսպասելի միջադեպ. Անդրանիկը, ով շատ բուռն խառնվածքի տեր անձնավորություն էր, իր մոտ է կանչել Բաղրամյանին և ապտակել նրան: «Կոռնետ Վանո՛, քո այդ երեսուն զինվորները իմ հույսն են, բայց ինձ լուր տվին, որ նրանց մի մասը հրաժարվում է կռվել: Սա մեր հայրենիքն է, ինչ կարևոր է, թե ովքեր են ղեկավարում... Հայրենիքը միշտ կապրի նվիրյալ չարքաշների կյանքով... Գնա ու կարգի բեր քո էսկադրոնը...» (Զորավար Անդրանիկի և Հովհաննես Բաղրամյանի հանդիպումը): Հ. Բաղրամյանը պատմել էր, որ 1918թ. գարնանն ամենուրեք ցավալի կերպով կարելի էր լսել հետևյալ խոսքերը՝ «թող հիմա էլ աղաների տղաները կռվեն, հերիք է մենք ինչքան կռվեցինք», և դա էլ հենց հարուցել էր Անդրանիկի զայրույթը: «Զորավարի ապտակն ինձ մարշալ դարձրեց: Ոչ մի պարագայում չի կարելի հայրենիքից նեղանալ...» (Զորավար Անդրանիկի և Հովհաննես Բաղրամյանի հանդիպումը): 1974թ. գտնվելով Փարիզում, մարշալ Հ. Բաղրամյանը այցելել է Պեր Լաշեզի գե-

ռեզմանատուն, ծաղկեպսակ դրել Անդրանիկի շիրիմին և զինվորական պատիվ տվել: Ծաղկեպսակի վրա գրված է եղել հետևյալ մակագրությունը. «Հավերժ հիշատակ Հայաստանի լեգենդար հերոս Անդրանիկին, ում զինվորը լինելու բախտն եմ ունեցել հայրենիքի համար ծանրագույն 1918թ.: Հ. Բաղրամյան» (Մնացականյան 1978, 26):

Հ. Բաղրամյանի հաջորդ այցը Հայաստան եղել է 1979 թ., երբ հեռուստաֆիլմերի «Երևան» ստուդիան նկարահանել է «Մարշալ Բաղրամյանը Հայաստանում» երկմասանոց վավերագրական կինոնկարը: Տեսարաններից մեկը նկարահանվել է Ապարանում՝ «Վերածնունդ» հուշարձանի մոտ: Աշխատանքների ավարտին Հարթավան գյուղի մոտ գտնվող ճաշարանում Հ. Բաղրամյանի պատվին ճաշկերույթ է կազմակերպվել, որն անցել է ջերմ մթնոլորտում: Ճրույցի ընթացքում նա ասել է, որ տեղանքը ծանոթ է, դիմացի սարերն ու անտառները լավ եմ հիշում: Նրան շրջապատողները մտածել են, որ զորավարը ծերացել է և տեղանքը շփոթում է, բայց դա այդպես չէր... Որոշ ժամանակից հետո Ճաշարանի դուռը բացվել է ու ներս է մտել մի ծերունի, ով խնդրել է թույլատրել իրեն տեսնել Հ. Բաղրամյանին: Այդ մասին հաղորդել են Հ. Բաղրամյանին և ստացել թույլտվություն: Եկվորը համարձակ քայլերով մոտենալով նրան բարձրաձայն ասել է. «Մարշալ ջան, 1918 թ. կռվից առաջ, դու Զամոլու գյուղում էիր, ձիավոր սպա... ես էլ քո դալլաքն էի, չէ՞ս հիշում»: Զորավարը տեղից բարձրանալով ողջագուրվել է ծերուկի հետ. «Բաղդասա՞ր, Բաղդո՞...,Էդ դու՞ ես, ոնց ես մեծացել...» (Մուրադյան, 1998, 6): Այս հանդիպումը նրանց տարել է հիշողությունների գիրկը: Նրանք, իրար հերթ չտալով, հիշել են հաջորդիվ դեպքերն ու կարևոր իրադարձությունները: Բաղդասարը շատ հիշողություններ ուներ թարմացնելու, բայց նրա համար ամենաթանկը, որ երբեք չի մոռացել, դա մարշալի կողմից նվեր ստացած ձին էր, որ սովի տարիներին փրկել էր ոչ միայն իր ընտանիքը, այլև գյուղացիներին՝ օգնել վարուցանքի հարցում: Բաղրամյանը, ուշադիր լսելով, ուրախացել է և կատակել. «...Ա՛յ Բաղդո, այդ մասին բարձրաձայն մի՛ պատմիր, ինձ դատի կտան» (Մուրադյան 1998, 6):

Անդրադառնանք մեկ այլ մասնակցի՝ Նավասարդ Վեզիրյանին: Ըստ մտերիմների դարբին Նավասարդը քաջ մարտիկ էր: Մասնակցել է Առաջին աշխարհամարտին, կամավորական շարժմանը, կռվել է Կարս-Սարիղամիշ ուղղությամբ գործող հայկական 4-րդ կամավորական գնդի կազմում, իր խիզախությամբ աչքի է ընկել Հասան-կալայի կռվում: Այդ մասին պատմել է նրա մտերիմը՝ դարբին Սամսոնը: Այն տեղի է ունեցել 1916 թ.: Թուրքերը փակել էին դեպի ջրի ակունք տանող ճանապարհը: 4-րդ կամավորական գունդը մատնվել էր ծարավի: Ջրի գնացողները չէին վերադարձել: Այդպես երկար շարունակել հնարավոր չէր: Նավասարդը վաշտի հրամանատարին առաջարկել է իր օգնությունը: Նա ընկերոջ հետ միասին գիշերով մոտեցել է աղբյուրին: Դժվար չէր կռահել, որ թուրքերը դարանակալել են, և երբ Նավասարդն ընկերոջ հետ հասել է աղբյուրին, հանկարծ թաքստոցից դուրս է եկել հերթապահ թուրք զինվորը և փորձել է ձեռքի երկարավուն մեծ կաթսան հագցնել Նավասարդի ընկերոջ գլխին: Նավասարդը ճկուն թռիչքով հասել է թուրքին, հանել է սուրը, իսկ վերջինս էլ տեսնելով դա, իր ձեռքում բռնած կաթսան հագցրել է իր գլխին՝ պաշտպանվելու հույսով: Վեզիրյանի թրի հատու հարվածը

չի ուշացել. նրա բազկի ուժն այնքան հզոր է եղել, որ մի հարվածով, կաթսայի հետ միասին, կտրել է թուրք զինվորի գլուխը: Այս պատմությունը բերնեբերան անցնելով հասել է Անդրանիկին, որն էլ 1918 թ. գտնվելով Կապանում անձամբ այցելել է Նավասարդին: Անդրանիկը տեսնելով նրան բացականչել է. «Դու՞ ես քաջ Նավասարդը... Հասան-կալայում ցուցաբերած քո քաջ արարքի համար իմ սուրը քեզ եմ նվիրում» (Նուրիջանյան 2010, 30): Բայց Վեզիրյանը հրաժարվել է վերցնել և ասել է. «Ո՛չ, զորավար, ես քո սուրը չեմ ընդունի, քանի որ կռիվը դեռ չի վերջացել, այն քեզ դեռ շատ պետք կգա» (Նուրիջանյան 2010, 31):

Հիշատակման է արժանի նաև մայիսյան հերոսամարտերի մեկ այլ մասնակցի՝ Բաշ-Ապարանի ճակատամարտի մասնակից՝ խմբապետ Մարտիրոս Աբրահամյանի կամ Բաշգառնեցի Մարտիրոսի անվան հետ կապված պատումը: Նա պատանի տարիքից անձնուրաց կերպով նետվել է ազգային-ազատագրական պայքարի հորձանուտը՝ դառնալով այդ ազատամարտի ինչպես հերոսական, այնպես էլ ողբերգական դրվագներից շատերի անմիջական մասնակիցն ու ականատեսը, առանձին դեպքերում՝ պատմության հերոսական էջերի հիմնական կերտողներից մեկը: Ի դեպ, իր ողջ մարտական կենսագրության ընթացքում Մարտիրոսին ուղեկցել է այն ներքին համոզմունքն, որ մարտի դաշտում իրեն մահ չի սպառնում: Նրա այդ համոզմունքն ավելի է ամրապնդվել հատկապես 1914 թ. դեկտեմբերին Արածանիի ձախ ափին՝ «Ղըլիջ գեդուկի» տակ գտնվող նախկին հայաբնակ, իսկ այդ ժամանակ չերքեզներով բնակեցված Դերիկ գյուղի մոտ տեսած ճակատագրական երազով[1]: Ղըլիջ գեդուկի տակ՝ հարավային կողմում, մի ավերակ չերքեզ գյուղում էր հաստատվել նրանց գումարտակը: Այդ նախկին հայկական գյուղի եկեղեցին չերքեզները փարախի էին վերածել: Գյուղը կոչվել է Դերիկ[2]: Խմբապետ Մարտիրոսի ուշադրությունը գրավել է այդ խոնարհված եկեղեցին: Մոտենալով քանդված սեղանին, համբուրել է, երեսը խաչակնքել և աղոթել: Վաշտ վերադառնալուց հետո իր օգնական Մակեդոնին հանձնարարել է, որ լավ մաքրեն եկեղեցին, իսկ երեկոները՝ լույս վառեն: Մինչև երեկո ամեն ինչ արվել է (Աբրահամյան 2016, 257):

---

1 «Մի քանի օր անց Ասմարի վրա հարձակվելու գիշերը նա տեսել է տարօրինակ երազը... Սպիտակ շուրջառով մի ծերունի հոգևորական մոտեցել է նրան, խաչակնքել և օրհնել՝ ձեռքը գլխին դրած: Ահա այդ երազի նկարագրությունը.

Երկյուղած ու գլուխս խոնարհած, շունչս պահած՝ լսում էի նրա օրհնության մրմունջները:

— Տեր հայր, ո՞վ եք դուք և ո՞րտեղից եկաք, — հարցրի, երբ նա վերջացրեց իր օրհնանքը:

— Ես այստեղի՝ Սուրբ Դերիկի ոգին եմ: Ամենափրկիչ էր կոչվում այս եկեղեցին, որ ավերեցին հեթանոս չերքեզները... Ամենափրկիչը հեռացավ, ես եմ մնացել այս ավերակներում: Չորս օր ու գիշեր աղոթում էի, խնդրում մեր Հայր Աստծուն, որ քեզ՝ որպես ազգասերի ու եկեղեցասերի, միշտ անփորձ պահի այս պատերազմում և հաղթության պսակով վարձատրի մինչև քո կյանքի վերջը... Իմ աղոթքն ընդունելի եղավ. դու մահ չէս տեսնի պատերազմում և միշտ կծածանվի ձեռքիդ դրոշը...: Ջերմեռանդությամբ համբուրեցի իր ձեռքը և ասացի. — Տեր, կինս պատճառավոր է, եթե ազատվի և տղա երեխա աշխարհ բերի, անունը Դերիկ կդնեմ՝ քո հիշատակը ինձ մոտ միշտ վառ պահելու համար...» (Աբրահամյան 2016, 257):

2 Դերիկ քրդերեն «դեյր» բառից առաջացած, որը նշանակում է վանք-եկեղեցի, իսկ «դեյրաք»՝ վանքիկ, (Աբրահամյան 2016, 257):

Դերիկի վանքի սուրբն ի պատասխան Մարտիրոսի կատարած աստվածահաճո արարքի, երազում նրան խոստացել է իր հովանավորությունը: Եվ իսկապես, Մարտիրոսը մի քանի անգամ վիրավորվել է մարտի դաշտում, բայց այդ վերքերից և ոչ մեկը կյանքի համար վտանգավոր չի եղել:

Այս պատումները լուսաբանում են մայիսյան հերոսամարտերի մասնակիցների կյանքի չբացահայտված էջերը և առավել ամբողջական դարձնում նրանց կերպարի բնութագիրը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿՁԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արխիվային փաստաթղթեր

ՀԱԱ, ֆ.121, ց.2, գ.126

Գրականություն

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 2016 – Աբրահամյան Մ., (Բաշգառնեցի Մարտիրոս) Իմ հիշելի հուշերը, Երևան, 2016:

Անկախ 2011 – Թովմաս Նազարբեկով, «Անկախ» շաբաթաթերթ, Երևան, 2011, օգոստոսի 29, էջ 4 – 11, 16:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ 1978 – Մնացականյան Ա., Մարշալ Բաղրամյան (Կյանքի և գործունեության ուրվագիծ), Երևան, 1978:

ՆՈՒՊԱՐԵԱՆ 1947 – Նուպարեան Մ.Խ, Տաղէր և յուշեր, Փարիզ, 1947:

ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆ 2010 – Նուրիջանյան Հ., Արդարացում, Երևան, 2010:

ՍԻՄՈՆԵԱՆՑ 1954 – Սիմոնեանց Ա., Զօր. Նազարբէգեան, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1954, էջ 25 – 34:

ՀԱՅ ԶԻՆՎՈՐ 1995 – Հայաստանի սպարապետը 140 տարեկան է, «Հայ զինվոր» շաբաթաթերթ, Երևան, 1995, դեկտեմբերի 9 – 16:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ 2002 – Հայրապետյան Հ., Մովսես Սիլիկյանի հաղթանակն ու ողբերգությունը, «Հայ զինվոր» շաբաթաթերթ, Երևան, 2002, սեպտեմբերի 7 – 14:

ՀՈՎՍԵՓՅԱՆ 1990 – Հովսեփյան Գ., Կյանքիս ամենադժբախտ օրը և երջանկությանս րոպեն, «Նորք» ամսագիր, Երևան, 1990, №1:

ՄՈՒՐԱԴՅԱՆ 2012 – Մուրադյան Մ., Զորավար Մովսես Սիլիկյան, «Հոգևոր հայրենիք» գրական թերթ, Երևան, 2012, օգոստոս, №8:

ՄՈՒՐԱԴՅԱՆ 1998 – Վլադիմիր Մուրադյան, Ապարան, Հարթավան («Մարշալ Բաղրամյանը Հայաստանում» կինոնկարի հեղինակ), Հովհաննես Բաղրամյանը Ապարանում. արթնացած հուշեր, «Գիտություն» թերթ, Երևան, 1998, մայիսի 28, №11:

ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԽԻՎՆԵՐԻ – Приложение. Послужной список командира Отдельного армянского корпуса генерал-лейтенанта Фомы Ивановича Назарбекова, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1992, N 2, էջ 111 – 117:

Էլեկտրոնային աղբյուրներ

ԱՆԿԱԽ ՆՈՐՈՒԹՅՈՒՆ – Փետրվարի 25-ին լրանում է զորավար Անդրանիկ Օզանյանի ծննդյան 150-ամյակը: Անկախ նորություն, Երևան, (http://www.ankakh.com/article/12536/zvoravar--andranik-ozanyan):

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՎՈՎ. ԻՎԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ. «ՓԱՍՏԵՐ» – Բաղրամյան վով. Իվան Բաղրամյան. «ՓԱՍՏԵՐ», (https://scribes.ru/hy/bagramyan-vov-bagramyan-ivan-hristoforovich-imeet-otnoshenie-k-naselennym.html):

ՋՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ և ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ–Ջորավար Անդրանիկի և Հովհաննես Բաղրամյանի հանդիպումը (https://www.facebook.com/103115998163088/posts/145005180640836/):

ARMENIA.IM 2018–Armenia. IM 2018, Великий маршал Баграмян: уникальное интервью о героизме армянского народа в 1918 году, (https://www.facebook.com/armeniaimr/videos/816712681869389/):

Arevik Melikyan

Memorial Complex of Sardarapat Battle,
National Museum of Armenian Ethnography and History of Liberation Struggle

arevikmeliqyan@gmail.com

NARRATIVES ON THE PARTICIPANTS OF THE 1918 MAY HEROIC BATTLES

Keywords: Narration, memoirs, museum, heroic battle, commander, exile, title.

The article presents narratives: stories, tales related to the participants of the 1918 May heroic battles–Tovmas Nazarbekyan, Movses Silikyan, Daniel-Bek Pirumyan, Martiros Abrahamyan, Hovhannes Bagramyan, Navasard Veziryan. Sources were the written and oral memories.

The article presents one-sided and, most likely, exaggerated stories related to the personality of the Commander-in-chief of the Armenian Corps Tovmas Nazarbekyan, which have been thoroughly analyzed.

These stories highlight the unknown pages of the life of the May battles participants. We see the attitude of the people towards their heroes, their mythologization and patriotic activity, which makes their real and already legendary images even more complete.

Аревик Меликян

Мемориальный комплекс Сардарапатской битвы,
Национальный музей этнографии армян и истории освободительной борьбы армян

arevikmeliqyan@gmail.com

ПОВЕСТВОВАНИЯ ОБ УЧАСТНИКАХ МАЙСКИХ ГЕРОИЧЕСКИХ СРАЖЕНИЙ 1918 ГОДА

Ключевые слова: Повествование, мемуары, музей, героическая битва, полководец, ссылка, звание.

В статье представлены повествования: рассказы, сказания, связанные с участниками майских героических сражений 1918 г. Товмасом Назарбекяном, Мовсесом Силикяном, Даниэлем-Беком Пирумяном, Мартиросом Абраамяном, Ованесом Баграмяном, Навасардом Везиряном. Источником послужили письменные и устные воспоминания.

Представлены односторонние и, по всей вероятности, преувеличенные рассказы, связанные с личностью главнокомандующего Армянского корпуса Товмаса Назарбекяна, которые подверглись тщательному анализу.

Эти истории освещают нераскрытые страницы жизни участников майских сражений. Мы видим отношение народа к своим героям, их патриотическую деятельность и мифологизацию, которые делают их более целостными как настоящие, так и уже ставшие легендами персонажи. Мы видим отношение народа к своим героям, их мифологизацию и патриотическую деятельность, что делают еще более целостными их уже ставшие легендой образы.